ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ «ՓԱԿ ՍԱՀՄԱՆԻ» ՀԱՐՑԸ ԹՈՒՐՔ ՀԱՍԱՐԱԿԱԳԵՏՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ*

Արաքս Մանուչարյան

Բանալի բառեր՝ *Հայաստան-Թուրքիա հարաբերություններ, հետխորհրդային շրջան, «Փակ սահման», թուրքական հետազոտական կենտրոններ, թուրք հասարակագետներ:*

Հետազոտության առարկա ընտրելով Հայաստանի և Թուրքիայի միջև առկա «Փակ սահմանի» հարցը՝ անհրաժեշտ ենք համարում կրկին նշել այն պայմանավորող քաղաքական իրողությունների շղթան: 1921 թվականի հուլիսի 2-7 կայացած ՌԿ(բ)Կ Կովկասի բյուրոյի պլենումի որոշմամբ Ադրբեջանին հանձնվեց Լեռնային Ղարաբաղը: Նույն թվականի մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերով Արևելյան Հայաստանին պատկանող զգալի տարածքներ նվիրաբերվեցին թուրքերին, իսկ Նախիջևանի մարզը՝ Ադրբեջանին:

Ինչպես հայտնի է, 1991 օգոստոսի 30-ին կայացած Ադրբեջանի Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանում ընդունվեց հռչակագիր, որով Ադրբեջանը դուրս եկավ ԽՍՀՄ-ի կազմից և իրեն հռչակեց 1918-20թթ. Մուսավաթական Ադրբեջանի հանրապետության իրավահաջորդ: Օգտվելով այս բարեպատեհ առիթից՝ 1991 թվականի սեպտեմբերի 2-ին՝ Ադրբեջանի՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալուց ընդամենը 3 օր անց, Ղարաբաղը դուրս եկավ Ադրբեջանի կազմից: Իսկ 1991 թվականի սեպտեմբերի 23-ին ՀՀ գերագույն խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ պետություն:

Այս փոփոխված քաղաքական պայմաններում, երբ, ի տարբերություն դարասկզբին ստացած զգալի զիջումների, տարածաշրջանի թյուրքական պետություններն ստացան գործողությունների և հնարավորությունների սահմանափակումներ, Թուրքիան մշակեց և իրագործեց Հայաստանը և Արցախը «Փակ սահմանների» միջոցով շրջափակելու քաղաքականությունը:

Բնականաբար, այս հիմնահարցը ուրույն տեղ գրավեց նաև թուրք պատմաբանների ու հասարակագետների ուսումնասիրություններում: Սա թե ինչու քաղաքական հայագիտության մեջ անհրաժեշտություն է առաջանում թուրքական ակադեմիական ու հրապարակախոսական շրջանակների մոտեցումների ու դիրքորոշումների նկատմամբ ցուցաբերել գիտական ու քննական վերաբերմունք և ուսումնասիրել «Փակ սահմանների» հիմնախնդրի հանդեպ նրանց հիմնական մոտեցումները:

Ինչպես աշխարհի մի շարք երկրներում, այնպես էլ թուրքական ակադեմիական շրջանակներում կարևոր դեր է հատկացվում հիմնականում քաղաքական ուսումնասիրությունների ինստիտուտներ համարվող այնպիսի կենտրոնների գործունեությանը, որոնք լայն ընկալմամբ կոչվում են Think Tank-եր [1], և որոնց հետազոտության արդյունքները հաճախ նաև օգտագործվում են պետական մակարդակում: Սույն հոդվածի պատրաստման համար ևս որպես կարծիքների ուսումնասիրման աղբյուր օգտագործվել են նմանատիպ կենտրոնին կից գիտահանրամատչելի պարբերականում [2] տեղ գտած նյութեր:

Հայ-թուրքական սահմանի փակ լինելու հետ կապված քննարկումները թուրքական ակադեմիական շրջանակներում սկսվում են ԽՍՀՄ փլուզման հաջորդող տարիներին, երբ ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը և Ղարաբաղի հիմնա-

---

* Հոդվածն ընդունվել է 20.09.19:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի Թյուրքագիտության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, պ.գ.թ. Ա. Սաֆարյանը: 04.10.19:

հարցը, ելնելով ստեղծված պատմաքաղաքական պայմաններից, առավել լայն տարածում են ստանում:

Խոսելով «Հայ-թուրքական փակ սահմանի» հիմնախնդրի մասին՝ թուրք մտավորականները (Ալի Ֆահիք Դեմիր, Մուստաֆա Այդըն և այլք), որպես կանոն, առանձնացնում են 3 պատճառ՝ սփյուռքահայության դերը, Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը, ՀՀ իշխանական օղակների հերթափոխը և դրանով պայմանավորված քաղաքական որոշումների հաջորդականությունը: Բնականաբար, այս հարցերը դրվում էին հարավկովկասյան երկրների հետխորհրդային շրջանում վարած արտաքին քաղաքականության առանցքում: Սա կարևոր ժամանակահատված է համարվում այն տեսանկյունից, որ հենց այս շրջանում են առաջ գալիս այն հիմնական քաղաքական իրադարձությունները, որոնք նախասահմանում և հաճախ պարտադրում են հարավկովկասյան երեք պետությունների վարած քաղաքականության հետագա ուղենիշները:

Անդրադառնալով այս կարևոր հիմնանդիրներին՝ թուրք հետազոտողները հիմնականում կատարում են այնպիսի շեշտադրումներ, որոնք արդարացնում են թուրքական պետության վարած քաղաքականությունը: Այսուհանդերձ պետք է նշել, որ հանդիպում են հեղինակներ, ովքեր քննադատաբար են մոտենում Թուրքիայի վարած քաղաքականության որոշ դրվագներին: Այս հարցերով թուրք գիտնականներն ու հրապարակախոսները, իրենց ուրույն մոտեցումներն և պատկերացումներն հրապարակվելով գիտահանրամատչելի պարբերականներում, ազդում են ոչ միայն ակադեմիական և որոշակիորեն նաև քաղաքական մոտեցումների, այլև հանրային գիտակցության և վարքագծի ձևավորման վրա:

Այսպիսով՝ հայ-թուրքական սահմանի փակ լինելու հարցում նախ և առաջ կարևորագույն տեղ է հատկացվում Հայաստան – սփյուռք հարաբերություններին և առաջ է քաշվում այն տեսակետը, ըստ որի՝ հայ-թուրքական հարաբերությունների բացասական ընթացքի, և հատկապես՝ սահմանի փակ լինելու հարցում սփյուռքահայության դերը մեծագույնն է, և որ հայության հենց այս զանգվածն է, որի կարծիքը ՀՀ արտաքին քաղաքականության գործում կարևորագույնն է և որոշիչ ոչ միայն սահմանի հարցի և դիվանագիտական անհամաձայնությունների մեջ, այլև ողջ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության կառուցման գործում:

Որպես վերոնշյալ հարցի չկարգավորման և նախնական բանակցային գործընթացների խափանման երկրորդ պատճառ է դիտարկվում է Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը և ՀՀ քաղաքական վերնախավի հերթափոխը հետևյալ կոնտեքստում.

Ըստ հոդվածագիր Քամեր Քասիմի՝ ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի կառավարման սկզբնական տարիներին հարմար շրջան ստեղծվեց հայ-թուրքական երկկողմանի հարաբերությունների զարգացման համար: Հատկապես կարևորվում է Սևծովյան տնտեսական համագործակցությունը՝ որպես դրդիչ ուժ բազմակողմանի տուրիզմի զարգացման համար, ինչպես նաև որպես ձեռներեցությամբ զբաղվող անձանց գործունեության համար ստեղծված «իսկայական» հնարավորությունների աղբյուր, որի շուրջ Լևոն Տեր-Պետրոսյանի ղեկավարած Հայաստանը Թուրքիայի հետ հարաբերությունների զարգացման մեծագույն հեռանկարներ էր ուրվագծում:

Մեկ այլ կարևոր հանգամանք է համարվում նաև այն, որ, 1993 թվականից սկսած, Հայաստանը սկսեց հարաբերությունները և համագործակցությունը խորացնել Ռուսաստանի հետ: Առաջ է քաշվում այն տեսակետը, թե հակաթուրքական մոտեցումներով հայտնի Դաշնակցություն կուսակցությունը, որին ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը 1994թ-ին հակաօրինական էր հայտարարել, Հայաստանի Հանրապետությունից դուրս սկսում է գործունեություն իրականացնել, որպեսզի սփյուռքը տրամադրվի Լևոն Տեր-Պետրոսյանի դեմ: Այս գործընթացի հետևանքով երկրի ներսում սկսվում է անկայունություն, իսկ նախագահ Տեր-Պետրոսյանը զրկվում է իշխանությունից: [3]

Ըստ Մուսթաֆա Այդընի՝[4] իշխանության գլուխ անցած Դաշնակցության հավանությունը վայելող Ռոբերտ Քոչարյանը պետք է փոխեր նաև հայ-թուրքական հարաբերությունները և ի վերջո բերեց դրանք նախապայմանների դաշտ:

Հենց այս իշխանափոխության համատեքստում է, որ առաջ է քաշվում Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության մեջ սփյուռքի դերին մեծագույն կարևորություն տալու տեսակետը: Առաջ են գալիս են պնդումներ, որ սփյուռքի ճնշման ներքո նախագահ Քոչարյանը վերհանում է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման հարցը, ինչպես նաև ԼՂՀ անկախության և «Փակ սահմանների» թեմաները: Ըստ այս կարծիքի՝ նախագահ Ռ. Քոչարյանը մի կողմից՝ դեմ էր, երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորման համար նախապայման լինի Ղարաբաղյան հարցը, մյուս կողմից էլ՝ պնդում էր, որ չպետք է մոռացության մատնել Հայոց ցեղասպանության հանգամանքը:[5]

Առավել մանրամասն հասկանալու համար թուրք մտածողների պատկերացումները, անդրանառնանք հայ-թուրքական հարաբերությունների, և «փակ սահմանների» հարցի թեմայով հոդվածներից մի քանի մեջբերումների.

«Հայ-թուրքական հարաբերություններում ամենացավագին դերն անշուշտ հայկական սփյուռքին է բաժին հասնում: Նրանց համար ցեղասպանության հարցը, թուրքական կողմից վրեժ լուծելու ձգտումները համընդհանուր գաղափարներ են, որոնց շնորհիվ նրանք շարունակում են իրենց ինքնության գիտակցումը արտասահմանում: Սփյուռքաբնակ հայերը, յուրաքանչյուրն իրենց բնակավայրում բազմապիսի կազմակերպություններ են հիմնադրել և ակտիվ գործունեություն ծավալելով՝ պահում են իրենց կապերը աշխարհի բոլոր ծայրերում առկա հայկական կազմակերպությունների հետ: Վերջիններս հիմնականում մշակութային, լեզվական, սպորտային բնույթ ունեն: Ի վերջո, Դաշնակցական, Հնչակյան և Ռամկավար կուսակցությունները նույնպես ակտիվ են սփյուռքում: Եթե ուսումնասիրենք, թե ինչքան ընդարձակ քաղաքականություն են վարում, կհասկանանք, որ լուրջ արդյունքների են հասել»: [6]

«Սփյուռքի համար այսպես կոչված ցեղասպանության ընդունումն ամենառաջնային հարցն է: Այս նպատակն իրագործելու համար այն երկրներում, որտեղ ստվարաբնակ հայ համայնք կա, ակտիվ լոբբիստական գործունեություն է ծավալվում, և ջանքեր չեն խնայվում որպեսզի տեղի խորհրդարանների պատգամավորները հակաթուրքական բանաձևեր ընդունեն»: [7]

«ՀՀ-ում սփյուռքին ամենամոտ կանգնած կուսակցությունը ՀՅԴ-ն է, միևնույն ժամանակ այս կուսակցությունն է, որ խոչընդոտում է Թուրքիայի և հայկական սփյուռքի միջև հարաբերությունների հաստատումը: Թուրքիայի արևելյան Անատոլիական շրջանները Արևմտյան Հայաստան կոչող կուսակցության նախագահ Հրանտ Մարգարյանի խոսքերով «Ցեղասպանության համաշխարհային ճանաչումը ոչ թե ինքնանպատակ է, այլ մասն է այն գործընթացի, որն ի վերջո հանգեցնելու է Արևմտյան Հայաստանի ազատագրմանը: Սփյուռքաբնակ հայերը հայտնի են իրենց այն վարքագծով, որ ամեն կերպ փորձում են միջամտել Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությանը, և հատկապես՝ Թուրքիայի հետ հարաբերությունների հետ կապված հարցերին»: [8]

Վերոնշյալ մեջբերումներում տեսնում ենք ակնհայտ մտահոգվածություն սփյուռքահայ համայնքի համախմբվածության և դրանից հետևող սպառնալիքների նկատմամբ, վախերը թերևս պայմանավորված են հայության այս զանգվածի ունեցած միջազգային լայնածավալ ազդեցության լծակներով:

Ստորև «Uluslararası İlişkiler» ակադեմիական պարբերականի հրեազգի թղթակից Բրենդա Շաֆերը անդրադառնում է նրան, թե, իր կարծիքով, ՀՀ-ն ինչ նշանակություն է տալիս սփյուռքին:

«Հայկական սփյուռքի ներուժը շատ կարևոր է արտաքին քաղաքականության և ներքին անվտանգության համատեքստում: ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության մեջ ՀՀ-ում և սփյուռքում ազգային ինքնագիտակցության պահպանումը նշված է որպես անվտանգության առաջնային պայման: Իսկ սփյուռքաբնակ հայրենակիցների ասիմիլացումը դիտարկում է որպես ՀՀ արտաքին վտանգ: Այնուամենայնիվ, չնայած շարադրման այս դեմագոգիկ ոճին, պետք է փաստենք, որ ՀՀ-ի քաղաքականությունը սփյուռքի նկատմամբ միշտ էլ եղել է պրագմատիզմի սահմաններում և տարբերակված է սփյուռքի տարբեր համայնքների նկատմամբ՝ ելնելով երկրի միջազգային շահերից: Հայաստանը զարգացրել է հայ համայնքների իրավունքների պաշտպանության քաղաքականությունը հիմնականում ոչ սահմանակից երկրներում:

Այսպես՝ Հայաստանի Հանրապետությունը սահմանակից Արցախում պնդում է տեղաբնիկ հայերի ասիմիլացմանը հայրենաբնակ ազգակիցների հետ, միևնույն ժամանակ առավել զգուշավոր քաղաքականություն է վարում Ջավախքում: Իսկ օրինակ՝ Իրանի կամ Ռուսաստանի կառավարությունների նկատմամբ ազգակիցների հարցերի շուրջ քննադատությունից առավելապես խուսափում է՝ ելնելով ռազմավարական համագործակցության շահերից:» [9]

«Փակ սահմանների» խնդիրը թուրք ակադեմիական շրջանակների ուսումնասիրություններում դիտարկվում է նաև ԼՂՀ հարցի դերակատարման տեսանկյունից: Այս հարցը նախ քննվում է ԽՍՀՄ անկման և ԼՂՀ հիմնախնդրի առաջացման ժամանակային միջակայքում, և ապա՝ հիմնահարցի հետագա զարգացումների շրջանակներում:

«Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի կառավարման սկզբնական տարիներին հարմար շրջան ստեղծվեց երկկողմանի հարաբերությունների զարգացման համար: Այս շրջանում Սևծովյան տնտեսական համագործակցությունը դրդիչ ուժ դարձավ, տուրիզմն առաջնային պլան մղվեց, իսկ ծեռներեցները գործունեության որոշակի ինտենսիվություն ցուցաբերեցին: Տեր-Պետրոսյանի ղեկավարած Հայաստանը Թուրքիայի հետ հարաբերությունների զարգացման հեռանկարներ էր ցուցաբերում: Սակայն ԼՂՀ հիմնահարցի առաջացրած իրավիճակը ուղղակիորեն բերեց նաև հայ-թուրքական հարաբերությունների սրմանը» նշում է պրոֆեսոր Քամեր Քասիմը: [10]

Իհարկե, թուրքական կողմն իր պատճառներն ուներ Սևծովյան տնտեսական համագործակցությունը նախաձեռնելու համար. ինչպես, օրինակ, նոր աշխարհաքաղաքական պայմաններում Արևմուտքի հետ բազմակողմ տնտեսական հարաբերությունների զարգացնելու մտադրությունը՝ հեռանկարում Եվրոմիության լիիրավ անդամ դառնալու նպատակով: Մյուս կողմից էլ՝ թուրքական կառավարությունը աշխատանքներ էր տանում զարգացնելու համագործակցությունը Հարավային Կովկասի ու նախկին ԽՍՀՄ մահմեդական հանրապետությունների հետ [11]:Կարևոր է նշել այն հիմնական մոտեցման մասին, ըստ որի՝ թուրքական կողմն իբրև թե ամեն ինչ արել է Հայաստանի Հանրապետությանը հնարավորինս ընդարձակ միջազգային գործընթացներում ներառելու համար: Խոսքը վերաբերում է թե Սևծովյան տնտեսական համագործակցության աշխատանքներին մասնակցելու ՀՀ-ին ուղղված հրավերին՝ թե՞ Թուրքիայի կողմից ՀՀ անկախության ճանաչմանը և թե՞ այլ հանգամանքներին, որոնցից յուրաքանչյուրը, չնայած որ ուրույն պատճառներ ուներ տեղի ունենալու համար, սակայն ներկայացված են որպես զուտ թուրքական բացառիկ խաղաղասիրության և մեծահոգության դրսևորումներ:

Գալաթասարայի համալսարանի դոցենտ, դոկտոր Ալի Ֆայիք Դեմիրը նշված հարցը հետևյալ կերպ է ներկայացնում իր «Հարավային Կովկասը Թուրքիայի արտաքին քաղաքականության հեռանկարում» հոդվածում:

«Վերջապես Թուրքիան 1991 թվականի դեկտեմբերի 16-ին առանց որևէ նախապայմանների ընդունում է ՀՀ անկախությունը, սակայն դիվանագիտական հարաբերություններ չի հաստատում: Չնայած նման անբարենպաստ սկզբին՝ Թուրքիան չի դա-

դարում ՀՀ-ին մարդկային կերպով վերաբերվել: 1992 թվականին առաջ են գալիս հանգամանքներ, որոնց կարող ենք երկկողմանի հարաբերությունների համար որպես հուսադրող բնորոշել: Այս տարի է, որ Թուրքիան որոշում է Սևծովյան ավազանում միացյալ տնտեսական համագործակցություն նախաձեռնել, և Հայաստանը նույնպես հրավիրվում է միանալու, անգամ հիմնադիր-անդամի կարգավիճակ է առաջարկվում: Նույն տարում, Ադրբեջանի կողմից տնտեսական ծանր դրության մեջ հայտնված Հայաստանը սեփական ձեռներեցների միջնորդությամբ ամեն կերպ աշխատում է Թուրքիայի հետ հարաբերությունները հարթելու համար ամեն միջոց նախաձեռնել; Ի վերջո Թուրքիան որոշում է ընդունում թույլ տալ սեփական սահմաններով անցկացնել ԱՄՆ-ից Հայաստան տեղափոխվող 100 տոննա կշռող պարենային օգնությունը, ինչպես նաև ընդունում է ՀՀ-ի համար կենսական նշանակություն ունեցող հարցի՝ էլեկտրականություն տալու որոշումը:

Բոլոր այս զարգացումներն անգամ չեն նպաստում, հարաբերությունները հարթվեն, իսկ «հայ-թուրքական սահմանի» հարցը կարգավորվի: ԼՂՀ հիմնահարցն էլ ավելի է խորանում, այն ժամանակ արտգործնախարար Հիքմեթ Չեթինը Հայաստանի և Ադրբեջանի միջև առկա հարցը լուծելու համար ուղևորվում է բազմաթիվ այցելությունների դեպի Եվրոպական կարևոր կենտրոններ:

Թուրքիան շարունակում է դրական վերաբերմունք ցուցաբերել արևելյան հարևանի նկատմամբ, և չնայած անգամ 1992 թվականի Խոջալուի դեպքերին՝ թուրքական կողմը կրկին հարցի համար խաղաղ լուծում գտնելու համար օգտագործում է ինչպես երկկողմանի հարաբերությունները, այնպես էլ միջազգային հարթակները» [12]:

Այս ամենում կարևոր են ակադեմիական հրապարակումներում տեղ գտած դիտարկումները Թուրքիայի արտաքին քաղաքականության բացառիկ մարդասիրական բնույթի շուրջ: Շեշտվում են Հայաստանի ու ԼՂՀ կողմից պատերազմական դրության մեջ իրականացրած մի շարք «անիրավություններ», որոնք, սակայն, միևնույն է, պատճառ չեն դառնում, մեծահոգի Թուրքիան դադարեցնի աշխատանքը հայ-թուրքական հարաբերությունների զարգացման և կարգավորման ուղղությամբ:

«Չնայած որ ՀՀ-ն 1992 թվականին վերցնում է Լաչինի միջանցքը՝ Թուրքիան շարունակում է այս երկրի հետ երկկողմանի հարաբերությունները: Սակայն Քելբաջարի առումն արդեն փոխեց ամեն ինչ, Թուրքիան ՀՀ-ի նկատմամբ օդային և ցամաքային էմբարգո սահմանեց» [13]:

Հետաքրքրական է նաև հետևել քննարկվող շրջանում հայ-թուրքական առնչությունների ասպարեզում տեղի ունեցող գործընթացների ժամանակագրական հերթականությանը: Այստեղ նույնպես հետևում ենք թուրքական խիստ «մեծահոգության» վառ դրսևորումներին՝ և այս ամենը չնայած ԼՂՀ հակամարտությանը և չնայած, որ «ՀՀ-ի կողմից ՔԲԿ-ին[14] թույլատրվում է ազատ գործել սեփական երկրի ներսում և գրավյալ «ադրբեջանական» տարածքներում»:

Մուստաֆա Այդընի «Թուրքիայի քաղաքականությունը Կովկասում և Միջին Ասիայում» հոդվածի սույն մեջբերումը արտահայտում է 1993-1995 թվականների գործընթացների խտացումը՝ թուրք մտավորականի աչքերով:

«1993 թվականին Լևոն Տեր-Պետրոսյանն ու Էլչիբեյը Դեմիրելի հետ հանդիպում են ունենում Թուրքիայում, և այստեղ թուրքական կողմը, օգտվելով առիթից, ներկայացնում է ՌԴ-ի և ԱՄՆ-ի աջակցությամբ եռակողմ գործողությունների պլանի օրինակ: Սակայն Ադրբեջանում Էլչիբեյի գահընկեցության և Հայաստանի կողմից ադրբեջանական տարածքների շարունակական օկուպացման պատճառով այս հարցով ոչ մի տեղաշարժ չի լինում:

1994թ. Հայաստանը PKK-ին թույլ է տալիս ազատ գործունեություն ծավալել սեփական և օկուպացված տարածքներում, ինչի հետևանքով հարաբերությունները էլ ավելի լարված են դառնում: Եվ չնայած դեպքերի նմանատիպ ընթացքին՝ թուրք-հայկա-

կան հարաբերություններում նոր հնարավորություններ են առաջ գալիս: 1994 թվականին կնքված հայ-ադրբեջանական զինադադարից հետո թուրքական կողմը, իհարկե Ադրբեջանի կարծիքը հաշվի առնելով, Հայաստանին թույլ է տալիս սեփական տարածքով միանալ համաշխարհային օդային երթևեկությանը: 1995 թվականը նույնպես դրական է սկսվում երկկողմանի հարաբերությունների համար՝ Կարսի և Իգդիրի բնակչությունը, ելնելով տնտեսական արդյունավետությունից, սկսում են ճնշել տեղական կառավարությանը, որպեսզի ի վերջո հասնեն նրան, որ Հայաստանի հետ սահմանը բացվի: Այս շրջանում երկրի ղեկավար Սուլեյման Դեմիրելը միանշանակ կողմ էր Հայաստանի հետ հարաբերությունների զարգացմանը, և հատկապես սահմանի բացմանը, սակայն Ադրբեջանի հետ կապված նրբությունները նույնպես հաշվի էր առնում: Սակայն այդ տարվա ընթացքում կատարված ամենաբացասական զարգացումը՝ Հայոց Ցեղասպանության թանգարանի բացումը, վերջնականապես կասեցրեց Դեմիրելի վերոնշյալ նախաձեռնողականությունը:

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանն ուղղված ԱՄՆ-ում այս շրջանում լուրջ ջանքեր էին գործադրվում: Այն նպատակով ԱՄՆ պետքարտուղարի օգնական Ռիչարդ Հոլբրուքը 1995 թվականի փետրվարին Անկարա այցելության ընթացքում վարչապետ Թանսու Չիլերին առաջարկեց հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման մի ծրագիր: Ծրագրում արծարծվում էին մի շարք հարցեր, ինչպես՝ օդային տարածքի հարցը, ռազմական ուժի կիրառման, առաջիկա հաշտեցման բանակցություններում Թուրքիայի դերի, օգնության միջանցքի բացման, ադրբեջանական փախստականների, նավթատարի գծի, ապրիլի 24-ի և «Փակ սահմանի» հարցը».[15]

Այս հոդվածում շոշափվում է նաև թեմա՝ կապված բանակցություններում որոշակի տեղաշարժի հետ, որտեղ թուրքական կողմը առաջարկում է ճանաչել ԼՂՀ ինքնավարությունը՝ պայմանով, որ կպահպանվի Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, և անգամ խոսք է գնում Ալիջանի հատվածում սահմանի բացման մասին: Այս բոլոր գործընթացների առանցքում Թուրքիայի անթաքույց նկրտումներն են լիիրավ կերպով մասնակցելու ԼՂՀ հարցի կարգավորման գործընթացներին, և ավելի մեծ դերակատարում ստանձնելով տարածաշրջանային ամենամեծ կոնֆլիկտի լուծման գործընթացում՝ ընդլայնել սեփական ազդեցության շրջանակները:

Կարևոր է, որ թուրքական պարզագույն նկրտումներն Անդրկովկասյան տարածաշրջանում սեփական ազդեցությունների ընդարձակման շուրջ շատ ճկուն կերպով ներկայացվում է որպես այս պետության կողմից ԼՂՀ հիմնախնդիրը լուծելու անհրաժեշտագույն պատրաստակամություն:

Ստորև կարելի է գտնել մեջբերում Զոշքուն Թոփալի՝ «Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում և Հայաստանի հետ հարաբերությունները» հոդվածից, որտեղ անդրադարձ է կատարվում ընդհուպ մինչև 2008 թվականի բանակցային գործընթացներին:

«Եվ այսպես, մինչև 1998 թվականը թուրքական կողմը ջանք չէր խնայում հայկական և ադրբեջանական կողմերին մեկ բանակցային սեղանի շուրջ համախմբելու համար, սակայն արդեն 2001 թվականից հայկական կողմը մերժում է Թուրքիայի արտգործնախարար Իսմայիլ Ջեմի առաջարկած եռակողմ հանդիպման գաղափարը՝ պնդելով, որ այս հարցում Թուրքիան հետապնդում է միակողմանի շահեր [16]: ԼՂՀ հարցի շուրջ հանդիպելով նույն թվականի մարտին՝ հայկական և ադրբեջանական կողմերը սկիզբ են դնում երկկողմ հարաբերությունների մի նոր փուլի: Նույն թվականին հանդիպելով ԱՄՆ-ում՝ քննարկում են 1997 թվականից ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից առաջարկվող խաղաղության հաստատման երեք տարբեր նախագծեր [17]:

Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մեջ որպես առաջնային ռազմավարական նպատակներից մեկն է նշվում էներգիայի, տրանսպորտի և կապի ենթակառուցվածքների անվտանգության և պաշտպանվածության ապահովումը:

Այս ռազմավարության ներքո որպես ազգային անվտանգությանը հնարավոր մեծագույն վտանգ է նշվում փոխադրման ոլորտում աշխատանքների խաթարումը ինչպես Թբիլիսի-Սուխումի երկաթգծի, այնպես էլ օրինակ Իրանի վրա դրված սանկցիաների պարագայում:

Երևանը նախազգուշացում ստացավ սեփական ցամաքային շրջափակման վերաբերյալ 2008 թվականի Ռուս-վրացական պատերազմով: Չնայած, որ պատերազմը չէր տեղավորվում Ռուսաստանի նախատեսած զարգացումների շրջանակներում, այն էականորեն վնասեց Հայաստանի՝ Վրաստանի միջոցով փոխադրումներ կատարելու գործընթացներին և, ինչը նվազ կարևոր չէ՝ Հայաստանի համար Ռուսաստանի ուղղակի հասանելությանը:

Սեփական դրության փխրունությունը Թուրքիայի հետ սահմանը բացելու համար ջանքեր գործադրելու ամենակարևոր դրդիչ ուժն էր: 2009 թվականի նոյեմբերի 10-ին Շվեյցարիայում թուրք և հայ արտգործնախարարների կողմից ստորագրվեցին դիվանագիտական հարաբերությունների հաստատման և հետագայում սահմանի բացման վերաբերյալ արձանագրություններ: Այս արձանագրությունները ստորագրումից հետո պետք է տեղափոխվեին երկու երկրների խորհրդարանների օրակարգ, որտեղ հաստատվելուց հետո պիտի իրագործվեին: Սակայն դեռևս ոչ Հայաստանի Հանրապետության և ոչ էլ Թուրքիայի Հանրապետության խորհրդարանում այս արձանագրությունները չեն հաստատվել:

Թուրքական կողմը արձանագրությունները վավերացնելու համար պնդեց, Հայաստանը Ադրբեջանական Հանրապետությանը զիջի ԼՂՀ հարող 5 շրջանները: Իսկ հայկական կողմը սրան բացասական արձագանք տվեց՝ նկատելով, որ քիչ չէ սահմանը Թուրքիայի կողմից միակողմանիորեն փակ է, դեռ հավելյալ պայմաններ են դրվում արձանագրությունների համար»[18]:

Որպես ամփոփում նշենք, որ թուրք գիտնականների և հասարակագետների աշխատանքներում որպես հայ-թուրքական «փակ սահմանի» բացման նախապայմաններ առաջ են քաշվում նաև հայկական միջազգային լոբբիստական գործունեության դադարեցումը, ԼՂՀ հարցի կարգավորման շուրջ ՀՀ զիջումները և պատմական քննումների դաշտից Ցեղասպանության հարցի դուրս հանումը:

Այնուամենայնիվ, երկուստեք ակնհայտ է, որ թե՛ Կովկասում սեփական ազդեցությունն ու դերը ընդլայնել ցանկացող Թուրքիայի համար և թե՛ Արևմուտքի հետ անմիջական՝ առավելապես տնտեսական փոխհարաբերությունների մեջ մտնել ցանկացող Հայաստանի Հանրապետության համար թերևս կարևոր է «Փակ սահմանի» հարցին խելամիտ լուծում տալու գործընթաց սկսելը, իսկ այս գործընթացում երկու կողմերն էլ պետք է հստակ պատասխանատվություն ստանձնեն միմյանց հարևանությամբ խաղաղ ապրելու քաղաքականության մեխանիզմներ մշակելու պարտավորվածության նկատմամբ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ուղեղային կենտրոններ (Encyclopedia Britannica “Think Tank, organization” https://www.britannica.com/topic/think-tank)
2. Kadir Has Universitesi “Uluslararası ilişkiler Dergisi” / Քադիր Հաս Համալսարան «Միջազգային հարաբերություններ» պարբերական http://www.uidergisi.com.tr/618/hakkimizda
3. Kamer Kasim, “Armenia’s Foreign Policy: Basic Parameters of the Ter-Petrossian and Kocharian Era”, The Armenian Reporter, 13 հուլիս, 2002 թ., էջ 20-22

4. Mustafa Aydın, “Kafkasya ve Orta Asya’yla Ilişkiler”, Baskin Oran (der), Türk Dışh Politikası; Kurtuluş savaş’ından bugüne Olgular, Belgeler, Yorumlar, cilt II, Istanbul, Iletişim Yayınları, 2001., s. 407.
5. Yeniyuzyıl, 6 haziran, 1998, “Erivan Ankara ile dialog istiyor”, dış basında Türkiye
6. Ալի Ֆաիք Դեմիր, Հետսովետական շրջանի հայ-թուրքական հարաբերությունները Demir, Ali Faik, “SSCB Sonrası Dönemde Türkiye-Ermenistan İlişkileri”,Uluslararası İlişkiler, հատոր 2, համար 5 (գարուն 2005), էջ 109-135:
7. Şenol Kantarcı, Kamer Kasım, İbrahim Kaya, Ermeni Sorununun Uluslararası İlişkiler Boyutu, ERMENİ SORUNU EL KİTABI, Թուրք-հայկական հարաբերությունների ազգային կոմիտե, Անկարա , 2003, էջ 125-126:
8. Omer E. Lütem, “Olaylar ve Yorumlar”, Ermeni Araştıramaları, N 10, yaz 2003, էջ 23
9. Shaffer, Brenda, “Foreign Policies of the States of the Caucasus: Evolution in the Post-Soviet Period”, Uluslararası İlişkiler, Volume 7, No 26 (Summer 2010), p. 51-65.
10. Kamer Kasim, նշված աշխատանք, էջ 4:
11. Արշակյան Գրիգոր, Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում 1991-2001թթ. , Երևան, 2009, էջ 163:
12. Ali Faik Demir, Türk dış politikası perspektifinden Güney Kafkasya, İstanbul, Bağlam Yayınları, 2003, s. 61-64.
13. Սվանտե է. Քորնել, “Turkey and the Conflllict in Nagorno karabakh: a Delicate Balance”, Middle East Studies, հատոր 34, N 1, Լոնդոն, Frank Cass, հունվար 1998:
14. ՔԲԿ (PKK - Partiya Karkeren Kurdistan), Քրդական Բանվորական Կուսակցություն հիմնված Աբդուլլահ Օջալանի կողմից 1970ական թվականներին: Ի սկզբանե նպատակ ունենալով ստեղծել քրդական պետություն՝ կուսակցությունը հետագայում սկսում է աշխատել քրդական ինքնավարություն ստեղծելու համար, Encyclopedia Britannica https://www.britannica.com/topic/Kurdistan-Workers-Party, հասանելի է 10 սեպտեմբեր, 2019:
15. Mustafa Aydın, “Türkiye’nin Kafkasya ve Orta Asya politikası”, SOSYAL VE BEŞERİ BİLİMLER DERGİSİ Cilt 2, Sayı 1, 2010 ISSN: 1309 -8012 http://www.sobiad.org/ejournals/dergi_sbd/arsiv/2010_1/03emrah_denizhan.pdf (հասանելի է 01.04.2019)
16. “Armenia, Yerevan Rejects Turkish Mediation” RFE/RL, 19 փետրվար, 2001
17. Jean Christophe Peuch, “Armenia / Azerbaijan: International Mediators report Progress On Karabagh Dispute”, RFE/RL, 10 April, 2001.
18. Coşkun Topal, Türkiye’nin Güney Kafkasya Politikası ve Ermenistan İle İlişkileri, Turkish Studies International Periodical For The Languages, Literature and History of Turkish or Turkic Studıes, Volume 10/2 Winter 2015, p. 963-978.

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հայ-թուրքական «Փակ սահմանի» հարցը թուրք հասարակագետների գնահատմամբ

Արաքս Մանուչարյան

Հայ-թուրքական հետխորհրդային շրջանի հարաբերությունների ուսումնասիրումը, այդ թվում և «փակ սահմանի» հարցը, հետաքրքիր վերլուծությունների և քննարկումների դաշտ է հայ հասարակագետների համար: Սա այն թեմատիկան է, որի շուրջ

արված ուսումնասիրությունները միտված են ոչ միայն ակադեմիական հարթակում գտնելու նշված հարցերի լուծման ուղիները, այլև գիտահանրամատչելի տեղեկատվության միջոցով ազդելու հանրային կարծիքի ձևավորման վրա:

Այս առումով կարևոր է թուրքական հետազոտական կենտրոնների գործունեության և հաշվետվությունների ուսումնասիրությունը, քանզի նշված հրապարակումները կարեւոր են ոչ միայն նրանով, որ արտահայտում են թուրք հասարակագետների գիտական հայացքները արդի քաղաքական հարցերի շուրջ, այլև հաճախ ձևավորում են հանրային կարծիք և նույնիսկ տեղ գտնում արտաքին քաղաքական օրակարգի ձևավորման գործընթացում:

РЕЗЮМЕ

Вопрос армяно-турецкой «закрытой границы» по оценкам турецких обществоведов

Аракс Манучарян

Ключевые слова: армяно-турецкие отношения, закрытые границы, турецкие исследовательские центры, академические исследования, турецкие научные деятели.

Изучение армяно-турецких отношений постсоветского периода и проблемы «закрытых границ» в частности, являются интересной сферой изучения и обсуждения для армянских обществоведов. Исследовательские работы по этой тематике не только направлены на выявление решения ряда политических вопросов на академическом уровне, но и оказывают заметное влияние на формирование общественного мнения путём публикации результатов вышеупомянутых исследований в научно-общественных информационных изданиях.

В этом контексте важно обратить внимание на деятельность турецких исследовательских центров и изучение их отчётных изданий, так как эти публикации важны не только в контексте выражения научных точек зрения на актуальные политические вопросы, но и часто воздействуют на общественное мнение и влияют на повестку внешней политики.

SUMMARY

The Issue of Armenian-Turkish “Closed border” Estimated by the Turkish Academicians

Araks Manucharyan

Keywords: Armenian-Turkey relations, "Closed Borders", Turkish Think Tanks, Academic researches, Turkish Academicians.

The study of Post-Soviet Period Armenian-Turkish relations and particularly the issue of the "Closed border" is a very noteworthy area of research for the Armenian Academicians. The academic researches on this issue target the actual problems’ solutions and have an influence on the public opinion through the publications in the popular scientific journals.

It is important to examine the Turkish Think Tanks' approaches and research reports, as those publications are valuable not only because they express the Turkish academicians’ approaches on actual political issues, but also influence the public opinion and even the foreign policy agenda-making processes.